ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2008

«ՀՀ պետական պարտքի 2008թ. տարեկան հաշվետվությունը» հրատարակվել է ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ - գլխավոր գանձապետ Ա. Ջանջուղազյանի և պետական պարտքի կառավարման վարչության պետ Ա. Մարգարյանի ընդհանուր խմբագրությամբ:

Նյութերը կազմել և թարգմանել են ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի պետական պարտքի կառավարման վարչության աշխատակիցներ Հ. Կարապետյանը, Ա. Մարությանը, Ս. Մկրտչյանը, Ա. Համբարձումյանը, Ա. Եգանյանը, Ս. Խանվելյանը, Ք. Խաչատրյանը, Գ. Վարդապետյանը, Ս. Իսրայելյանը:

ՆԵՐՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

Օգտագործված հապավումներ

ՆՊՊ-ներքին պետական պարտք
ՊՊ-պետական պարտատոմսեր
ՊԿՊ-պետական կարճաժամկետ պարտատոմսեր
ՄԺՊ-միջին ժամկետայնության պարտատոմսեր
ԵՊ-երկարաժամկետ պարտատոմսեր
ԽՊ-խնայողական պարտատոմսեր

2008թ-ին ՀՀ ֆինանսների նախարարությունն անցում կատարեց նոր՝ ուղենշային պարտատոմսերի թողարկումների, որոնց տեղաբաշխումն իրականացվում է պարբերական վերաբացումների միջոցով: Նոր ուղենշային պարտատոմսերի թողարկումները լայն հնարավորություններ են ստեղծում պետական պարտատոմսերի երկրորդային շուկայի զարգացման համար:

1995-2008 թվականներին ներքին պետական պարտքը բնութագրող հիմնական ցուցանիշները՝ ծավալը, ժամկետայնությունն ու եկամտաբերությունը դրսևորել են հետևյալ միտումները (տես գծ.1).

Գծապատկեր 1

ՊՊ-ի ծավալը, ժամկետայնությունը և եկամտաբերությունը 1995-2008 թթ.



ՀՀ ներքին պետական պարտքի կառավարման արդյունավետության մասին են վկայում 2001թ-ից սկսած ՀՀ պետական պարտատոմսերի սպասարկման ծախսերի (տոկոսավճարներ) տարեցտարի նվազումը և ներքին աղբյուրների հաշվին պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման հնարավորության մեծացումը (տես աղ. 1 և աղ. 2):

Աղյուսակ 1

ՆՊՊ-ը բնութագրող հիմնական տնտեսական ցուցանիշները 1995-2008թթ.

տոկոս

	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008
ՆՊՊ/ՀՆԱ	0.04	1.55	2.88	3.06	3.16	2.89	3.10	3.00	2.65	2.43	2.29	2.66	2.40	2.76
Սպաս./ՀՆԱ	-	0.09	0.56	0.98	1.09	0.91	0.56	0.44	0.34	0.28	0.23	0.20	0.21	0.19

Աղյուսակ 2

ՊՊ-ի գծով կատարված գործառնությունները 1995-2008թթ.

մլն. դրամ

	Տեղաբաշխում	Հասույթ	Մարում	Սպասարկում	Դեֆիցիտի ֆինանսավորում
1995 թ.	750.7	717.6	516.7	24.0	200.9
1996 թ.	19,438.6	17,299.9	8,836.5	592.3	8,463.4
1997 թ.	41,360.0	32,998.1	23,886.6	4,524.3	9,111.5
1998 թ.	36,567.8	29,728.2	31,636.7	9,329.8	-1,908.6
1999 թ.	57,561.9	47,757.6	46,801.4	10,801.6	956.2
2000 թ.	44,847.2	40,744.4	38,962.4	9,353.9	1,782.0
2001 թ.	45,914.6	41,890.4	35,935.7	6,541.5	5,954.7
2002 թ.	41,883.8	38,202.8	34,255.5	5,955.3	3,947.3
2003 թ.	43,300.0	40,267.0	37,963.7	5,587.3	2,303.3
2004 թ.	43,900.0	44,018.2	38,435.5	5,408.2	5,582.7
2005 թ.	45,071.5*	45,701.6	39,333.4	5,066.4	6,368.1
2006 թ.	32,253.6	32,474.9	25,392.1	5,251.1	7,082.8
2007թ.	39,330.4	40,025.3	30,776.6	6,550.4	9,248.7
2008թ.	64,961.5	63,893.2	38,551.9	6,812.6	25,341.3

*-ճշգրտված

Գծապատկեր 2

ՆՊՊ-ի գործիքակազմը 1995-2008 թթ.

մլն. դրամ



2008 թվական

2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՆՊՊ-ը բնութագրող ցուցանիշներն ունեն հետևյալ տեսքը.

- ՀՀ կառավարության 2007թ.-ի դեկտեմբերի 6-ի N1434-Ա որոշմամբ որպես ՀՀ ներքին պետական պարտք ներգրավված վարկի ծավալը կազմել է 8,588.4 մլն. դրամ (28.0 մլն. ԱՄՆ դոլար):
- ՊՊ-ի ծավալն անվանական արժեքով կազմել է 92,304.79 մլն. դրամ, որից պետական կարճաժամկետ պարտատոմսերը՝ 30,133.5 մլն. դրամ, միջին ժամկետայնության պարտատոմսերը՝ 36,873.63 մլն. դրամ, երկարաժամկետ պարտատոմսերը՝ 24,985.83 մլն. դրամ և խնայողական պարտատոմսեր 311.84 մլն. դրամ:
- ՊՊ-ի գծով դեֆիցիտի ֆինանսավորումը կազմել է 25,341.32 մլն. դրամ:

- ՊՊ միջին կշռված եկամտաբերությունը կազմել է 8.36%:
- ՊՊ-ի միջին կշռված ժամկետայնությունը կազմել է 1535 օր (ՊԿՊ-եր՝117 օր, ՄԺՊ-եր՝ 799 օր, ԵՊ-եր՝ 4345 օր և ԽՊ-եր՝ 243 օր):

Աղյուսակ 3

2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՆՊՊ-ն բնութագրող ցուցանիշներ

	առ 31.12.2006թ	**առ 31.12.2007թ**	**առ 31.12.2008թ**
Ներքին պետական պարտքը այդ թվում՝	**70,697.01**	**75,429.8**	**100,893.2**
Պետական պարտատոմսեր անվանական արժեքով (մլն.դրամ) որից՝	70,697.01	66,303.2	92,304.8
կարճաժամկետ պարտատոմսեր (մլն.դրամ)	7,699.6	7,000.0	30,133.5
միջին ժամկետ. պարտատոմսեր (մլն.դրամ)	38,087.8	47,421.15	36,873.63
երկարաժամկետ պարտատոմսեր (մլն.դրամ)	12,175.4	11,710.62	24,985.83
Խնայողական պարտատոմսեր (մլն.դրամ)	-	171.43	311.84
*ԿԲ վերակապիտալիզացիայի համար տրամադրված պարտատոմսեր**	12,734.2	-	-
ՀՀ ռեզիդենտից ստացված վարկ (մլն.դրամ)	-	9,126.6	8,588.4
ՊՊ ժամկետայնությունը (օր) որից՝	**1348**	**1258**	**1535**
կարճաժամկետ պարտատոմսերի համար (օր)	74	158	117
միջին ժամկետ. պարտատոմսերի համար (օր)	766	878	799
երկարաժամկետ պարտատոմսերի համար (օր)	3977	3467	4345
Խնայողական պարտատոմսերի համար (օր)	-	231	243
ՊՊ եկամտաբերությունը (%) որից՝	**7.0844**	**7.0480**	**8.3566**
կարճաժամկետ պարտատոմսերի համար (%)	5.2225	6.0191	8.4986
միջին ժամկետ. պարտատոմսերի համար (%)	6.9699	6.8795	7.2735
երկարաժամկետ պարտատոմսերի համար (%)	8.6203	8.3414	9.7831
Խնայողական պարտատոմսերի համար (%)	-	7.4374	8.4250
ՆՊՊ / ՀՆԱ (%)	**2.66**	**2.40**	**2.76**

*- ՀՀ ԿԲ վերակապիտալիզացայի նպատակով 2006թ. ապրիլի 27-ի N 567-Ա որոշման հիման վրա տրամադրված պետական պարտատոմսերը 2007թ-ի հունիսի 28-ին ամբողջությամբ մարվեցին: Փոխարենը, ՀՀ ԿԲ-ին 2007թ-ի հունիսի 6-ի N 606-Ա կառավարության որոշմամբ տրամադրեցին անտոկոս ցպահանջ պետական հասարակ մուրհակներ:

Գծապատկեր 3

2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՊՊ-ի կառուցվածքն ըստ թողարկման ժամկետայնության



ԱՌԱՋՆԱՅԻՆ ՇՈՒԿԱ

«ՀՀ 2008թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով պետական պարտատոմսերի հաշվին նախատեսվում էր բյուջեի դեֆիցիտը ֆինանսավորել 25,000.0 մլն. դրամով և վճարել 7,600.0 մլն. դրամ սպասարկման ծախս:

2008 թվականի ընթացքում տեղի է ունեցել կարճաժամկետ պարտատոմսերի 32 և առաջին անգամ ուղենշային պարտատոմսերի 4 թողարկում 3, 5, 10 և 20 տարի մարման ժամկետով, համապատասխանաբար 20 մլրդ. դրամ, 30 մլրդ. դրամ, 50 մլրդ. դրամ և 80 մլրդ. դրամ ծավալներով: 2008 թվականի ընթացքում տեղի է ունեցել ուղենշային պարտատոմսերի 24 տեղաբաշխման աճուրդներ, որից 14-ը՝ ՄԺՊ-ի, 10-ը՝ ԵՊ-ի: Թողարկվել է 85.6 մլրդ. դրամ ծավալով պարտատոմս: Պահանջարկը կազմել է 99.8 մլրդ. դրամ, Պետական պարտատոմսերի թողարկման ծավալի նկատմամբ պահանջարկը գերազանցել է 1.17 անգամ: Տեղաբաշխվել է 64.6 մլրդ. դրամ: Պետական պարտատոմսերի տեղաբաշխման ծավալի մեջ ՊԿՊ-երը կազմել են 31.1 մլրդ. դրամ (48%-ը), ՄԺՊ-երը՝ 15.8 մլրդ. դրամ (25%-ը), իսկ ԵՊ-ները 17.6 մլրդ. դրամ (27%-ը): Տարվա ընթացքում կատարված ՊԿՊ մեկ թողարկման ծավալը միջինը կազմել է մոտ 1,125.0 մլն. դրամ, ՄԺՊ-ն՝ 1,721.4 մլն. դրամ, ԵՊ-ն՝ 2,550.0 մլն. դրամ: Հաշվետու ժամանակահատվածում տեղի է ունեցել ԽԱՊ-երի 29 թողարկում՝ 1.450 մլրդ. դրամ ծավալով, որից տեղաբաշխվել է 340.8 մլն. դրամը: 2008թ-ի ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարությունը իրականացրել է պարտատոմսերի ամենամսյա հետգնում՝ 17,745.9 մլն. դրամ ընդհանուր ծավալով:

2008թ.-ի ընթացքում կատարված տեղաբաշխումների միջին կշռված ժամկետայնությունը կազմել է 1889 օր, տեղաբաշխման եկամտաբերությունները տատանվել են 6.5%-11.0%-ի սահմաններում, իսկ տեղաբաշխման միջին կշռված եկամտաբերությունը կազմել է 8.9393%: (տես աղ. 4):

Աղյուսակ 4

2008 թվականի ընթացքում տեղաբաշխված ՊՊ-երի եկամտաբերության և ժամկետայնության ցուցանիշներն ըստ ամիսների

Ամիսներ	Նվազագույն եկամտաբերություն (%)	Առավելագույն եկամտաբերություն (%)	Միջին կշռված եկամտաբերություն (%)	Տեղաբաշխման միջին կշռված ժամկետ (օր)
Հունվար	6.4550	7.0000	6.8918	364
Փետրվար	7.2497	11.0000	9.7120	4430
Մարտ	8.4646	11.0000	10.0047	4564
Ապրիլ	7.0000	10.0000	9.6368	3255
Մայիս	6.9900	7.5000	7.4374	1006
Հունիս	6.9500	11.0000	8.9549	3362
Հուլիս	7.4500	9.0000	8.1521	1140
Օգոստոս	7.4500	8.4700	8.1420	529
Սեպտեմբեր	8.0000	11.0000	8.4073	898
Հոկտեմբեր	8.1700	9.2500	8.4807	384
Նոյեմբեր	8.0000	9.7000	9.1278	423
Դեկտեմբեր	8.4800	9.5399	9.0661	95
Ընդամենը	**6.4550**	**11.0000**	**8.9393**	**1889**

Աղյուսակ 5

2008 թվականի ընթացքում ՊՊ-ով կատարված գործառնություններն ըստ եռամսյակների

մլն. դրամ

Եռամսյակներ	Թողարկում	Տեղաբաշխում	Հասույթ	Մարում	Սպասարկում	Դեֆիցիտի ֆինանսավորում
I	24,650.0	20,058.6	20,131.9	9,816.6	1,927.10	10,315.3
II	17,800.0	6,746.0	6,850.8	7,057.1	1,247.37	10,108.9
III	22,550.0	17,482.0	16,881.7	10,514.8	2,394.69	16,475.9
IV	22,050.0	20,674.9	20,028.7	11,163.3	1,243.47	25,341.3
Ընդամենը	**87,050.0**	**64,961.5**	**63,893.1**	**38,551.8**	**6,812.63**	**25,341.3**

2008 թվականի ընթացքում պետական պարտատոմսերի հաշվին պետական բյուջեի դեֆիցիտն օրենքով նախատեսվածից ավել է ֆինանսավորվել 341.3 մլն. դրամով և կազմել 25,341.3 մլն. դրամ, իսկ սպասարկման ծախսերը (տոկոսավճարները) տնտեսվել են 647.4 մլն. դրամով՝ կազմելով 6,812.6 մլն. դրամ: Սպասարկման ծախսերի տնտեսման պատճառը ուղենշային միջնաժամկետ և երկարաժամկետ պարտատոմսերի ծրագրված ծավալի թերտեղաբաշխումն է, որի հետևանքով վճարվող սպասարկման ծախսերի ծավալը փաստացի ավելի քիչ կազմեց:

Գծապատկեր 4

ՊՊ-ի եկամտաբերության և ժամկետայնության շարժը 2008 թվականին



Գծապատկեր 4-ից երևում է, որ 2008թ-ի ընթացքում պետական պարտատոմսերի ժամկետայնությունն սկսել է աճել՝ պայմանավորված երկարաժամկետ՝ 10 և 20 տարի մարման ժամկետայնությամբ ուղենշային պարտատոմսերի թողարկմամբ, իսկ սեպտեմբեր ամսից սկսեց նվազել, քանի որ ֆինանսական շուկայում ձևավորված իրավիճակից ելնելով ՀՀ կենտրոնական բանկը դուրս եկավ պետական պարտատոմսերի շուկայից և մինչև 6 ամիս մարման ժամկետով պարտատոմսերն սկսեց թողարկել ՀՀ ֆինանսների նախարարությունը

Գծապատկեր 5

Բանկային համակարգում առկա ավելցուկային իրացվելիության և ՊՊ-երի պահանջարկ/թողարկում կապը 2008 թվականին (երկշաբաթյակներով)



Ինչ վերաբերվում է ՊՊ-երի նկատմամբ ձևավորված պահանջարկին, ապա դրա 96.1 %-ը (95.9 մլրդ. դրամ) ձևավորվել է գործակալների և դիլերների սեփական միջոցների, իսկ 3.9%-ը (3.9 մլրդ. դրամ)՝ նրանց ներդրողների հաշվին: 2008թ-ին պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ժամանակ մասնակիցների կողմից ձեռք բերված պարտատոմսերի 65.6%-ը բաժին է ընկնում 5 գործակալներին, 33.0%-ը՝ 13 դիլերներին, 1.4%-ը՝ գանձապետական պահառու համակարգին: Պետական պարտատոմսերի սեփականատերերի կառուցվածքում տարվա վերջի դրությամբ գերակշռում են ՀՀ բանկերը՝ 91.49% տեսակարար կշռով (տես գծ. 6): ՀՀ կենտրոնական բանկի մոտ_գտնվող պարտատոմսերի 86.36%-ը (50,514.49 մլրդ. դրամ) կազմում են ռեպո գործառնությունների արդյունքում գրավադրված պարտատոմսերը:

Գծապատկեր 6

ՊՊ-երի սեփականատերերի կառուցվածքը 2008 թվականի դեկտեմբերի 26-ի դրությամբ



ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՇՈՒԿԱ

2008 թվականի ընթացքում ՊՊ երկրորդային շուկայում կատարված առք ու վաճառքի գործարքներն ունեն հետևյալ տեսքը՝

- Կատարվել են 725 գործարքներ, որից
  - միջբանկային շուկայում՝ 650 գործարք,
  - ՀՖԲ-ում՝ 69 գործարք,
  - ՀՀ կենտրոնական բանկի կողմից՝ 6 գործարք:
- Գործարքների ընդհանուր ծավալը կազմել է 69,687.3 մլն. դրամ, որից՝
  - առևտրային բանկերի կողմից 63,361.7 մլն. դրամ,
  - ՀՀ կենտրոնական բանկի կողմից 5,260.3 մլն. դրամ,
  - ՀՖԲ-ում ուղենշային պարտատոմսերով՝ 1,065.4 մլն. դրամ:
- Միջբանկային գործարքների ծավալում.
  - ՊԿՊ շրջանառության ծավալը կազմել է 8,250.7 մլն. դրամ,
  - ՄԺՊ շրջանառության ծավալը կազմել է 25,959.4 մլն. դրամ,
  - ԵՊ շրջանառության ծավալը կազմել է 29,151.5 մլն. դրամ:
- ՀՀ կենտրոնական բանկի գործարքների ծավալում.
  - ՄԺՊ շրջանառության ծավալը կազմել է 5,210.3 մլն. դրամ,
  - ԵՊ շրջանառության ծավալը կազմել է 50.0 մլն. դրամ
- ՀՖԲ-ի գործարքների ծավալում.
  - ՄԺՊ շրջանառության ծավալը կազմել է 360.5 մլն. դրամ,
  - ԵՊ շրջանառության ծավալը կազմել է 704.9 մլն. դրամ:
- Կատարված բոլոր գործարքների միջին կշռված եկամտաբերությունը կազմել է 6.8061%,
- Միջին կշռված ժամկետայնությունը՝ 2892 օր
- Միջին օրական ծավալը՝ 275.4 մլն. դրամ
- Գործարքների միջին օրական քանակը՝ 3:

Գծապատկեր 7

2008 թվականին երկրորդային շուկայում կատարված գործառնություններն ըստ ժամկետայնության



	1-91 օր	92-182օր	183-364 օր	1-3 տարի	3-4 տարի	4-5 տարի	5 և ավել տարի
գործ. ծավալ (մլն.դրամ)	3,264	2,083	3,721	9,088	10,924	5,191	30,156
եկամտ. (%)	8.34	7.68	7.21	7.50	7.78	8.09	9.68

Գծապատկեր 8

Կատարված գործարքների մեջ ՊԿՊ-ների, ՄԺՊ-ների և ԵՊ-ների տեսակարար կշիռը.



Գծապատկեր 9

2008 թվականին երկրորդային շուկայում կատարած գործարքներն ըստ ամիսների



Աղյուսակ 6

Պետական պարտատոմսերի երկրորդային շուկայի ծավալներն ու եկամտաբերությունները 2000-2008 թվականներին

	գործարքների ընդհանուր ծավալ (մլն. դրամ)	միջին եկամտաբերություն (%)	կատարված գործարքների քանակը	միջին օրական ծավալը (մլն. դրամ)	միջին օրական քանակը
2000թ.	73,930.9	24.69	2469	289.4	9
2001թ.	53,906.6	19.78	1489	211.4	6
2002թ.	43,288.7	15.07	1013	171.1	4
2003թ.	48,881.6	12.71	1229	194.8	5
2004թ.	45,716.1	6.64	734	180.7	3
2005թ.	77,200.9	5.43	1466	303.9	4
2006թ.	66,723.7	6.24	727	261.7	3
2007թ.	90,499.7	6.61	969	360.6	4
2008թ.	69,687.3	6.81	725	275.4	3

ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՀԱՌՈՒ

2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Գանձապետական պահառուի կողմից իրականացված գործառնություններն ունեցել են հետևյալ տեսքը.

- մասնակցել է կազմակերպված ՊԿՊ–երի 32 թողարկումներից 14-ին, իսկ ԽԱՊ-երի 31 թողարկումներից 28-ին,
- ներդրման ծավալը կազմել է 1,210.6 մլն դրամ, որից 340.8 մլն ՊԿՊ-եր և 869.8 մլն ԽԱՊ-եր,
- թողարկված ՊԿՊ-երի 2.4 % ձեռք է բերվել ԳՊ-ի միջոցով (ԳՊ-ի ձեռք բերման առավելագույն ծավալը սահմանվել է թողարկման ծավալի 10%-ի չափով),
- մարվել է 719.5 մլն. դրամի պարտատոմս, որից 200.4 մլն ՊԿՊ-եր և 519.1 մլն ԽԱՊ-եր,
- 2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընդամենը շրջանառության մեջ է եղել 1,181.6 մլն. դրամի պարտատոմս, որից 869.8 մլն ՊԿՊ-եր և 311.8 մլն ԽԱՊ-եր,
- դեպո հաշիվների քանակը կազմել է 771, որոնցից 33-ը բացվել են հաշվետու ժամանակահատվածում,
- շրջանառության մեջ եղած պարտատոմսերի միջին կշռված ժամկետայնությունը կազմել է 128 օր, որտեղ ՊԿՊ-երի համար այն կազմել է 86 օր, իսկ ԽԱՊ-երի համար՝ 243,
- մեկ ներդրողի կողմից ներդրման միջին ծավալը կազմել է 16.8 մլն. դրամ, որտեղ ՊԿՊ-երի գծով այն եղել է 96.6 մլն դրամ, իսկ ԽԱՊ-երի գծով՝ 5.2 մլն դրամ,
- ներկայացված հայտերում ներդրման միջին ծավալը կազմել է 11.3 մլն. դրամ, որտեղ ՊԿՊ-երի գծով այն եղել է 43.5 մլն դրամ, իսկ ԽԱՊ-երի գծով՝ 3.9 մլն դրամ,
- պարտատոմսերի մեկ թողարկմանը ներկայացվել է միջինը 1.7 հայտ, որտեղ ՊԿՊ-երի մեկ թողարկմանը ներկայացվել է միջինը 1.6 հայտ, իսկ ԽԱՊ-երի մեկ թողարկմանը ներկայացվել է միջինը 2.8 հայտ:

Ներդրման ծավալը 2007թ-ի նկատմամբ աճել է 41.7%-ով, իսկ ԳՊ-ով ձեռք բերված և շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի ծավալը նախորդ տարվա նկատմամբ աճել է 69.9%-ով (տես գծ. 10):

Գծապատկեր 10

Շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի ծավալը 2008թ.

(մլն դրամ)



Ներդրման և շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի ծավալների աճը հետևանք է նախորդ ժամանակահատվածի համեմատ 2008թ-ին ՊԿՊ-երի և ԽԱՊ-երի թողարկումների քանակի ավելացման:

2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դեպո հաշիվների քանակը 33-ով ավելին է եղել նախորդ տարվա նույն ցուցանիշից (տես գծ. 11):

Գծապատկեր 11

Դեպո հաշիվների դինամիկան 2008թ.



Դեպո հաշիվների քանակի աճը պայմանավորված է ԽԱՊ-երի թողարկմամբ, որոնք վաճառվում են միայն Գանձապետական պահառուի միջոցով և միայն ֆիզիկական անձանց:

Աղյուսակ 4

ԳՊ-ի կողմից 2008թ-ի ընթացքում ՊԿՊ-երով կատարված գործառնությունները

(մլն դրամ)

Ժամկետը	Մարում	Սպասարկում	Ընդամենը	Տեղաբաշխում	Տեղաբաշխվածի կշիռը (%)	Թողարկումների քանակը	Մեկ թողարկման ներդրման միջին ծավալը
1-13 շաբաթ	-	-	-	200.1	18.2	9	222.3
14-26 շաբաթ	-	-	-	240.7	25.3	9	267.5
27-39 շաբաթ	95.6	4.3	100.0	95.0	31.7	2	475.0
40-52 շաբաթ	395.4	23.7	419.1	334.0	26.7	12	278.3
Ընդամենը	491.0	28.0	519.1	869.8	24.2	32	271.8

Աղյուսակ 5

ԳՊ-ի կողմից 2008թ-ի ընթացքում ԽԱՊ-երով կատարված գործառնությունները

(մլն դրամ)

Ժամկետը	Մարում	Արժեկտրոնի սպասարկում	Ընդամենը	Տեղաբաշխում	Տեղաբաշխվածի կշիռը (%)	Թողարկումների քանակը	Մեկ թողարկման ներդրման միջին ծավալը
Մինչև 1 տարի	95,7	3.4	99.1	86.4	14.4	12	7.2
1 - 2 տարի	104,7	16.5	121.2	225.5	34.7	13	17.3
2 - 3 տարի	-	0.4	0.4	28.9	14.5	4	7.2
Ընդամենը	200.4	20.3	220.7	340.8	23.5	29	11.8

Գծապատկեր 12

ԳՊ-ի միջոցով շրջանառության մեջ եղած պարտատոմսերի կշիռը 2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ



ԱՐՏԱՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔ

2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ արտաքին պետական պարտքը կազմել է 1577.1 մլն ԱՄՆ դոլար, որից ՀՀ կառավարության և նրա կողմից տրամադրված երաշխիքների գծով արտաքին պարտավորությունները կազմել են 1425.2 մլն ԱՄՆ դոլար (կամ ընդհանուր արտաքին պետական պարտքի 90.4%), իսկ ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունները՝ 151.9 մլն ԱՄՆ դոլար (կամ ընդհանուր արտաքին պետական պարտքի 9.6%):

2007թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ հանրապետության արտաքին պետական պարտքի ծավալը աճել է 8.8 %-ով կամ 128.2 մլն ԱՄՆ դոլարով, որը պայմանավորված է եղել ինչպես ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ արտաքին պետական պարտքի զամբյուղը ներկայացնող հիմնական արտարժույթների փոխարժեքների փոփոխությամբ[1], այնպես էլ 2008թ. ընթացքում կատարված գործառնություններով:

Գծապատկեր 13

ՀՀ արտաքին պետական պարտքի մեծության փոփոխությունը և նրա վրա ազդող գործոնները



2008 թվականի ընթացքում արտաքին պետական պարտքի գծով կատարվել են հետևյալ գործառնությունները.

[1] 31.12.2007թ. դրությամբ 1SDR=1.58025USD, 1EUR= 1.4721 USD
31.12.2008թ. դրությամբ 1SDR=1.54027USD, 1EUR= 1.4429 USD

Աղյուսակ 9

ՀՀ արտաքին պետական պարտքի սպասարկումը և արտաքին վարկային միջոցների ստացումները 2008թ. ընթացքում

մլն ԱՄՆ դոլար

	Ստացում	Սպասարկում		
		ընդամենը	այդ թվում	
			մարում	տոկոսավճար
Ընդամենը	***175.833***	***54.113***	***42.057***	***12.056***
այդ թվում՝				
I. ՀՀ կառավարության և նրա կողմից տրամադրված արտաքին երաշխիքների գծով արտաքին պարտավորություններ	**160.139**	**26.293**	**15.096**	**11.197**
որից՝				
1. Միջազգային կազմակերպություններ	95.345	*21.923*	*12.945*	*8.978*
ա) Համաշխարհային Բանկ	79.470	20.283	12.150	8.133
որից՝				
Զարգացման Միջազգային Ընկերակցություն	79.470	19.142	11.273	7.869
Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկ	-	1.141	0.877	0.264
բ) Գյուղ. Զարգացման Միջազգային Հիմնադրամ	4.248	1.225	0.795	0.430
գ) Նավթ արդյունահանող երկրների կազմակերպության (ՕՊԵԿ) Միջազգային Զարգացման Հիմնադրամ	3.596	0.415	-	0.415
դ) Ասիական Զարգացման Բանկ	8.032	0.001	-	0.001
ե) Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ	-	-	-	-
2. Օտարերկրյա պետություններ	*64.793*	*4.369*	*2.151*	*2.219*
ա) ԱՄՆ	-	2.721	1.975	0.746
բ) Գերմանիա (KfW)	9.112	0.908	0.071	0.837
գ) Ֆրանսիա	-	0.143	0.105	0.038
դ) Ճապոնիա	55.681	0.598	-	0.598
II. ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտավորություններ	**15.694**	**27.821**	**26.962**	**0.859**
որից՝				
1. Միջազգային կազմակերպություններ	*7.356*	*27.721*	*26.962*	*0.760*
ա) Արժույթի Միջազգային Հիմնադրամ	7.356	27.721	26.962	0.760
2. Օտարերկրյա պետություններ	*8.338*	*0.099*	-	*0.099*
ա) Գերմանիա (KfW)	8.338	0.099	-	0.099

* Փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման նպատակով KfW-ի կողմից ՀՀ կառավարության երաշխիքի հիման վրա տրամադրված վարկի սպասարկումը իրականացվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից, սակայն նշված վարկի գծով պարտքը (2008թ. վերջի դրությամբ 24.126 մլն ԱՄՆ դոլար) և դրա սպասարկումը (2008թ. ընթացքում 0.259 մլն ԱՄՆ դոլար, որից տոկոսավճար՝ 0.188 մլն ԱՄՆ դոլար և հիմնական գումարի մարում՝ 0.071 մլն ԱՄՆ դոլար) ներառված է ՀՀ կառավարության պարտքի մեջ:

2008 թվականին մասհանումներ չեն կատարվել 2007 թվականին ստորագրված երկու վարկային պայմանագրերի գծով (վարկատուներ՝ Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ և Աբուդաբիի Զարգացման Հիմնադրամ):

2008թ. ընթացքում ընդհանուր առմամբ ստորագրվել են 5 նոր վարկային համաձայնագրեր՝

- Զարգացման Միջազգային Ընկերակցության հետ 1 վարկային համաձայնագրեր (12.8 **մլն SDR** ընդհանուր գումարով, վարկառու Հայաստանի Հանրապետություն)[2],
- Ասիական Զարգացման Բանկի հետ 1 վարկային համաձայնագիր (**11.201 մլն SDR** ընդհանուր գումարով, վարկառու Հայաստանի Հանրապետություն),
- Գյուղատնտեսության Զարգացման Միջազգային Հիմնադրամի հետ 1 վարկային համաձայնագիր (**7.9 մլն SDR** գումարով),
- Միջազգային Զարգացման ՕՊԵԿ Հիմնադրամի հետ 1 վարկային համաձայնագիր (**14 մլն ԱՄՆ դոլար** գումարով, վարկառու Հայաստանի Հանրապետություն),
- Ֆրանսիայի Հանրապետության (Նատեքսիս) հետ 1 վարկային համաձայնագիր (**24.4 մլն EUR** գումարով, վարկառու Հայաստանի Հանրապետություն)

Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքը բնութագրող ցուցանիշների շարունակական բարելավման միտումը պահպանվել է նաև 2008 թվականին[3]:

2008 թվականին զգալիորեն նվազել է արտաքին պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը:

Գծապատկեր 14

ՀՀ արտաքին պետական պարտքի և արտաքին պետական պարտք / ՀՆԱ ցուցանիշի դինամիկան



Ցուցանիշի նվազումը արդյունք է ոչ միայն ՀՆԱ-ի աճի, այլ նաև ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի արժեվորման:

2001-2008թթ. ընթացքում Հայաստանի արտաքին պետական պարտքը կազմված է եղել չորս արժույթներով՝ USD, SDR, EUR և JPY, տրամադրված վարկերից:

---

[2] 31.12.2008թ. դրությամբ գործող արտաքին պետական վարկային համաձայնագրերի վերաբերյալ տեղեկատվությունը տես հավելված 2-ում:

[3] ՀՀ արտաքին պետական պարտքի բեռը բնութագրող որոշ ցուցանիշների գծով տվյալները տես հավելված 1-ում:

Գծապատկեր 15

ՀՀ արտաքին պետական պարտքի կառուցվածքն ըստ տրամադրման արժույթի



ՀՀ արտաքին պետական պարտքի մեջ արտոնյալ վարկերը 2008թ. վերջին կազմել են 99.1%:

Գծապատկեր 16

ՀՀ արտաքին պետական պարտքի արտոնյալության դինամիկան



2008թ. վերջի դրությամբ միայն Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի ու Միջազգային Զարգացման ՕՊԵԿ Հիմնադրամի կողմից տրամադրված մեկական վարկերն են եղել առևտրային պայմաններով:

Գծապատկեր 17

ՀՀ արտաքին պետական պարտքի կառուցվածքն ըստ վարկատուների 2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ